

ՀԽՍՀ Լուսավորության ժողովրդական Կոմիտացիա
մեծահասակների ուսուցման վարչություն

375

ԱՏՈՒԹՎԱՆ Է. 1961 թ.

ԾՐԱԳՐԵՐ

ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԻ ԱՆԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՑՄԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

364

ԹՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

$\frac{\pi}{23091}$



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՍՏԱՐԱԿՈՂՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ - 1986

Փոխադրեց՝ Մ. ՄԱՅԻԼՅԱՆ
Տելու. ԽԱՐԱՊՈՒՐ՝ Գ. ԶԵՆՅԱՆ
Արքագրիչմեր. Հ. Դալուխամյան, Հ. Մամուկյան

Հրատարակ. 3835, Գլավ. լրազոր Ա.—1128, Պատվ. 1015, Տիրաժ 2000
Հանձնված և արտադրության 13 սպառառի 1936 թ.
Ստորագրված և տպագրության 19 սպառառի 1936 թ.

Պետհրատի տպարան, Յերևան, Ա Գնունի, 4.

Մ Ա Ա Գ Ի Բ

Հ Ա Յ Ո Յ Լ Ե Զ Վ Ի (200 ԺԱՄ)

Ընթացանություն—Հատվող այրբենի գործածությունը՝
կարողանալ բառեր կազմել և կարդալ առանց տառ բաց թողնե-
լու։ Կարողանալ բարձրաձայն, կանոնավոր կերպով կարդա-
պարզ պատմվածքներ կամ հոդվածներ՝ կանգ առնելով վերջա-
կետից հետո։

Կանոնավոր կարդալ թե՛ դասագրքում—այրբենարանում յե-
ղած ձեռագիր հոդվածները և թե՛ ուսուցչի կողմից դրատախ-
տակի վրա գրած տեքստը։

Կարողանալ պատասխանել կարդացածի շուրջն ուսուցչի
կողմից տրված պարզ հարցերին։

Կարողանալ կարդալ տեղական լրագրերում յեղած մատչելի
հոդվածները, հասկանալ և հաղորդել նրանց համառոտ բովան-
դակությունը։

Աստիճանաբար վարժեցնել կանոնավոր, արտահայտիչ և
բարձրաձայն կարդալուն, իսկ ընթերցարանի բաժնում սկսել
նաև ինքնուրույն կերպով լուս, դիտակցական կարդալու փոր-
ձեր կատարել։

Կարողանալ անհատկանալի բառերն առանձնացնել։ Կարդա-
լու ժամանակ հասկանալ ընդհանուր գործածական տերմինները։

Գրություն—պահպանելով տառերի և բառերի սովորական հե-
ռավորությունները, կարողանալ գրել մաքուր և պարզ։

Ինքնուրույն կերպով կարողանալ գրել համառոտ նախադասություններ՝ առանց տառեր բաց թողնելու և առանց ավելորդ տառեր գրելու բառերի մեջ, պահպանել նախաշտառության վերջում վերջակետի գործածությունը:

Գրավոր աշխատանքի ժամանակ կարողանալ պահպանել տարրական ուղղագրական կանոնները՝ մեծատառի գործածությունը նախադասության և հատուկ անունների սկզբում, ոժանդակ բայի առանձին գրվելը. գրության և արտասանության տարրերությունը:

Կարողանալ անսխալ կերպով գրել քաղաքական և արտադրական այն տերմինները և բառերը, վորոնք սովորաբար առորյա կյանքում գործածական են (կոլեկտիվ, կոլտնտեսություն, հեղափոխություն, տեխնինիմում, կոմբայն):

Գրել և կարողանալ կարդալ ամենագործածական կրճատ բառերը՝ ԽՍՀՄ, ՀՆԽՀ, Ժողովական, Գործկոմ, Գյուղխորհուրդ, ՄՏԿ,

Կարողանալ գրի առնել իր մտքերը, գրել հասցե, լրացնել հարցաթերթիկ, պարզ ու մատչելի հարցերին տալ գրավոր պատասխաններ, տարեկերջում՝ նամակ:

ԲԱՑԱՏՐԱԿԱՆ

Մրագիրը կազմված և յերկու հիմնական բաժնից՝ 1) ընթերցանություն և 2) գրություն:

Ինքնին հասկանալի յե, վոր ծրագրի հիշված բաժինների նյութերը մշակվելու յեն վոչ թե առանձին-առանձին, այլ սերտ կերպով կապակցված են լինելու միմյանց հետ: Խոսքի զարդացման, ինչպես նաև գրքով ու լրագրով տարվող աշխատանքները պետք ե շաղկապելած լինեն ընթերցանության և գրավոր պարագաների հետ:

Ընթերցանություն. Վորպեսդի կարողանան ձեռք բերել գրելու և կարդալու սկզբնական ունակություն, սովորողներն ամենից առաջ պետք ե հասկանան, վոր բառը կազմված ե վանկերից, իսկ վանկը՝ հնչյուններից: Նրանք պետք ե իմանան, վոր խոսքը բաժանվում ե բառերի, բառերը՝ վանկերի, վանկերը՝ հնչյունների և վոր յուրաքանչյուր հնչյուն ունի համապատասխան տառ:

Սովորողներու կարդալու ժամանակ պետք ե կարողանան բա-

սերը բաժանել վանկերի և վանկերը Հնչյունների — տառերի ։
Հատվող այբբենով կազմել բառեր, կանոնավոր գրի առնել
կազմված բառերը և կարդալ:

Այբբենարանով կարդալու ժամանակ, բառերի ընտրության
տեսակետից պետք ե պահպանել աստիճանականություն. ա) մի-
ավանկ և յերկվանկ բառեր կարդալը (վար, նավ, ցան, ցորեն,
դարի, արոր և այլն) և այնպիսի պարզ նախադասություններ,
վորոնք կազմված լինեն նման բառերից. բ) յերեք վանկանի բա-
ռեր կարդալը (մեքենա, շարքացան և այլն) և կարդալ այնպիսի
նախադասություններ, վորոնք կազմված են թե՛ այս և թե՛ նա-
խորդ տիպի բառերից. գ) մեկ փակ վանկ ունեցող բառերը և
համապատասխան նախադասությունները կարդալը. դ) կար-
դալ այնպիսի բառեր, վորոնք ունեն յերկու բաղաձայն։

Սկզբնական շրջանում պետք ե անցնել այնպիսի բառեր, վո-
րոնք գրվում են այնպես, ինչպես արտասանվում են, խույս տա-
լով այնպիսի բառերից, վորոնց ուղղագրությունը տարբեր է
արտասանությունից, որինակ՝ մարդ, վարդ և այլն։

Սովորողները, աստիճանաբար ձեռք բերելով կարդալու ու-
նակություն, սկսում են կարդալ համառոտ պատմություններ,
հոգվածներ, լուզունդներ, պլակատներ, հայտարարություններ,
պահպանելով կետպղարական նշաններից վերջակետը և պատա-
խանելով կարգացած նյութի շարքը տրված հարցերին։

Ուսումնական տարվա առաջին կիսամյակում սովորողները
պետք ե ձեռք բերեն պարզ պարբերություններն ամբողջ բառե-
րով, իսկ բարդ, յերկար բառերը՝ վանկ-վանկ կարդալու ունա-
կություն։

Յերկրորդ կիսամյակում սովորողների մեջ պետք ե ամրաց-
նել ամբողջ բառերով համեմատաբար բարդ պարբերություններ
կարդալու ունակություն։ Բարձրաձայն կարդալու հետ միա-
սին սովորողներին վարժեցնել զասազբքում, այլ գրքույներում
և լրագրերում յեղած պարզ հոդվածների լրւու ընթերցմանը։
Նման ձեր ընթերցանությունը դասասուն պետք ե անցնի այն
ժամանակ, յերբ սովորողները կսկսն ինքնուրույն կերպով կար-
դալ պարզ հոգվածներ։ Վորպես լրացուցիչ նյութ դասասուն
բարձրաձայն կարդում ե սովորողներին հետաքրքրող լրագրա-
կան առանձին հոգվածներ կամ պատմվածներ, բացարելով սո-
վորություններին անհասկանալի բառերն ու դարձվածքները, միաժա-

մանակ դասատուն սովորողներին ևս ժամանակից և դարձնում գրքեր և լրագրեր կարդալուն: Սովորողների մեջ ընթերցանության սեր զարթեցնելու և այդ ունակությունը զարգացնելու նպատակով դասերից դուրս ևս կազմակերպվում և լրագրի ու գրքի արտադասարանական ընթերցանություն:

Ընթերցանություն սովորեցնելու հետ միասին պետք և սովորողներին պատվաստել ուրիշների կարդալը լսելու և համեմանալու ունակություն (պարզ հովվածներ և դեղարթեստական գրվածքներ): Անհրաժեշտ և սովորողներին ծանոթացնել զրադարանի ընդհանուր նշանակության և զբեր ստանալու կարգի հետ, ընդդրկելով նրանց զրադարանային աշխատանքների մեջ:

Դասատուն հաճախ սովորողներին տալիս եւ տանը կարդալու համար հետաքրքրական նյութեր, հետեւելով, վոր նրանք անպայման կարդան և հաշվետու լինեն իրեն:

Սովորողների խոսքի զարգացման աշխատանքները տարիում և անձանոթ բառերի ու տերմինների բացատրությամբ, պատվաստելով այնպիսի ունակություն, վորպեսզի նրանք կարողանան ուսուցչի աված հարցերին պատասխանել բանավոր և զրավոր ձևով և կարդացած հոգվածի բովանդակությունը կառլակցված կերպով պատճել:

Դասատուն հետևում և սովորողների խոսելու ձեին և ուղղում և նրանց սխալները:

Գրություն. — Ձեռագրի ուսուցման ժամանակ սովորողներին պետք և վարժեցնել կանոնավոր նստել, զրիչն ու մատիտը կանոնափոր բռնել, կարողանալ վարդիլ տետրի և քանաքել հետ: Սովորողները պետք եւ կարողանան կանոնավոր էեր՝ պով ձևակերպել վոքրատառերն ու մեծատառերը: Տառեր դրեւու հետ միասին սովորողները վարժվում են զբել ամրող բառեր և նախադասություններ. ձեռք են բերում հասկացողություն անունների ու աղջանունների, ինչպես նաև նախադասության սկզբում մեծատառերի գործածության մասին:

Ուսումնական տարվա առաջին կիսամյակի վերջում սովորողները պետք և կարողանան պարզ և կանոնավոր ձևակերպված տառերով զբեր արտագրել տպագիր և ձեռագիր տեքստերը և լսողությամբ (նախորդը վերլուծ էլուց հետո) զրի առնել կարճ նախադասություններ՝ բաղկացած այնպիսի բառերից, վորոնք

գրվում են այնպես, ինչպես արտասահմամ են: Սովորողներն արտադրություն կատարելու ժամանակ պետք է կարողանան պահպանել կետաղբության և մեծատառերի կանոնները:

Ուսումնական տարվա յերկրորդ կիսամյակի ընթացքում սովորողները պետք եւ ամելի ամբացնեն ամբողջ անցած նյութը, ձեռք բերեն ուղղաղրական գիտելիքներ և ունակություններ:

Ուղղաղրական գիտելիքները և ունակություններն անցնում են հետեւյալ կարգով.

Հասկացողություն ձայնավոր և բաղաձայն տառերի մասին: Բառերի բաժանումը վանկերի: Տողադարձ:

Վերնադիբը, պարբերությունը և հատուկ անունները մեծատուով սկսելը. վերջակետի դորձածությունը:

Պարապմունքների ամբողջ ընթացքում սովորողները վարժվում են, առանց տառեր բաց թողնելու, ամենադորձածական քաղաքական և արտաղրական տերմինները, համառոտած բառերն անխսալ գրել:

Այս և նման ճեղով սովորողները հասնում են ինքնուրույն գրավոր աշխատանք կատարելուն: Սովորողների գրավոր ունակությունները պարզելու և այն խորացնելու նպատակով՝ դաստուն հաճախ դրաստիտակի վրա անհատ սովորողներին զբավոր վարժություններ եւ տալիս, տալով միաժամանակ անային աշխատանք:

ԹՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄՐԱԳԻՐ (130 ԺԱՄ)

Մրագրի ծավալը՝ Վեցանիշ ամբողջ թվերի կարդալն ու գրելը. կլոր միլիոնների կարդալն ու գրելը, կլոր թվերի զումարումն ու հանումը, կլոր թվերի բազմապատկումն ու բաժանումը միանիշ թվերի՝ 10-ի, 100-ի, 1000-ի վրա. յերկարության, ծանրության և ծավալի մետրական չափեր. ժամանակի չափեր. գաղափար մասի և տոկոսի մասին:

ՄՇԱԿՄԱՆ ՀԱԶՈՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1. Առաջին տասնյակի թվերի հաշվումը: 10 թիվը: Զերոյի նշանակությունը թվերը թվանշաններով գրելով: Կլոր տասնյակ-ներ: Գումարման, հանման և հավասարման նշաններ: 20-ից բարձր յերկանիշ թվերի հաշվումը: Թվանշանների տեղային նշանակությունը թվերի մեջ: Թվերի հաշվումը 11-ից մինչև 19-ը:

2. Թվերի բանավոր գումարումը հարյուրի սահմանում և ապա նույնի գրավոր լուծումը մի տողի վրա (վոչ իրար տակ): Հանման աղյուսակը: Գումարման և հանման ստուգումը:

3. Թվերի բանավոր համումը հարյուրի սահմանում և այս նույնի գրավոր լուծումը մի տողի վրա (վոչ իրար տակ): Հանման աղյուսակը: Գումարման և հանման ստուգումը:

4. Հարյուրի սահմանում բանավոր գումարման և հանման պարզեցրած ձևերը:

5. Եկուանիշ և քառանիշ թվերի հաշվումը: Թվերի կոր-դերը:

6. Յեռանիշ և քառանիշ թվերի գրավոր գումարումը: Գումարելիները: Գումարը: Զերոն գումարելիների մեջ: Բարդ անվանական թվերի գումարումը (ոռոքի և կոպեկ, որեր և ժամեր և այլն):

7. Յեռանիշ և քառանիշ թվերի գրավոր հանումը: Նվազելի: Հանելի: Մնացորդ կամ տարբերություն: Զերոն նվազելիի մեջ: Գումարման և հանման ստուգումը: Բարդ անվանական թվերի հանումը (ոռոքիներ և կոպեկներ, որեր և ժամեր և այլն):

8. Հորմեական թվանշանները: Հորմեական թվանշաններով գրելը 12-ի սահմանում և նրանց կարգալը:

9. Հնդանիշ և վեցանիշ թվերի հաշվումը: Միավորների և հազարավորների դասերի կարգերը: Հնդանիշ, վեցանիշ թվերի գումարումն ու հանումը:

10. Գաղափար բազմապատկման մասին: Բազմապատկելի: Բազմապատկիչ: Արտադրյալ: Միանիշ թվերի բազմապատկման աղյուսակը:

Յնդկանիշ թվի բանավոր բազմապատկումը միանիշ թվով: Զերոյով վերջացող թվերի բանավոր և գրավոր բազմապատկումը միանիշ թվով: Զերոները բազմապատկելիի մեջ:

11. Գաղափար բաժանման մասին: Բաժանելի: Բաժանարար: Քանորդ: Բաժանման աղյուսակը 100-ի սահմանում: Բազմապատկման և բաժանման ստուգումը: Յերկանիշ և յեռանիշ թվերի բանավոր բաժանումը միանիշ թվի վրա, յերբ բաժանելիի յուրաքանչյուր կարդն առանց մնացորդի բաժանվում և բաժանարարի վրա: Բանավոր բաժանումը մնացորդով: Յերկանիշ թվի բանավոր բաժանումը միանիշ թվի վրա, յերբ ստացվում և յերկանիշ քանորդ: Բազմանիշ թվի բաժանումը միանիշ թվի վրա (կիսագրավոր յեղանակով): Զերոները բաժանելիի մեջ և քանորդի վերջում:

12. Ամբողջ թվերի հաշվումը մինչև միլիոն: Գաղափար միլիոնի մասին: Կլոր միլիոնների հաշվումը: Կլոր միլիոնների բանավոր գումարումն ու հանումը, և ապա նույնի լուծումը գրավոր՝ մի տողի վրա: Զերոները նվազելիի մեջ:

13. Ամբողջ թվի բազմապատկումն ու բաժանումը 10-ի, 100-ի և 1000-ի վրա:

14. Յերկարության, ծանրության և ծավալի մետրական չափեր: Խոչոր չափերի վերածումն ավելի մանրերի և ընդհա-

կառակը: Բարդ անվանական թվերի գումարումն ու հանումը: Ժամանակի չափեր (դար, տարի, ամիս, որ, ժամ, ըոպե և վայրկյան): Ժամանակի խոշոր չափերի փոխարինումն առվելի ժանր չափերով:

15. Գաղափար մասի վերաբերյալ: Մասեր կազմելը, կարգալը և գրելը— $\frac{1}{2}$, $\frac{1}{4}$, $\frac{1}{10}$, $\frac{1}{100}$:

Գաղափար տոկոսի մասին: Տոկոսի արտահայտելը կոտորակով (50 տոկ. 25 տոկ. և 10 տոկ.):

16. Անցածի կրկնությունը և հաշվառում:

Ծանօթություն.—1. Յուրաքանչյուրի բաժինն անցնելիս պետք ե ինդիբներ լուծել: Ամբողջ գասունթացի ընթացքում հարկավոր և հատկապես ուշադրություն դարձնել ուսուցչի ղեկավարությամբ սոլորողների կողմէց ինդիբներ կազմելու վրա, վորոնց տվյալները պետք ե վերցված լինեն ձեռնարկության, քաղաքի, շրջանի վիճական տեղեկություններից:

2. Վորպես ոժանդակ պարագաներ դպրոցում պետք ե լինեն համբէչներ, չափերի նմուշներ, բաղմապատկման, բաժանման, մետրական չափերի պատի աղյուսակներ, մասերը և տոկոսներն իրազննորեն պատկերող աղյուսակներ:

ԺԱՄԵՐԻ ՈՐԻՆԱԿԵԼԻ ԲԱՇԽՈՒՄՆ ՀՍՏ ԹԵՄԱՆԵՐԻ

1) Հարյուրի սահմանում ամբողջ թվերի կարդալը, գումարելը և հանելը (30 ժամ):


2) Յեռանիշ և քառանիշ, ինչպես և հնդանիշ և վեցանիշ թվերի հաշվումը, գումարումը և հանումը: Հռոմեական թվանշաններ (26 ժամ):

3) Բազմապատկում միանիշ թվով (18 ժամ):


4) Բաժանում միանիշ թվի վրա (22 ժամ):

5) Կլոր միլիոնների կարդալը, զումարումը և հանումը: Բաղմապատկում և բաժանում 10-ի, 100-ի և 1000-ի վրա: Մետրական չափեր: Ժամանակի չափեր: Գաղափար մասի և տոկոսի մասին (34 ժամ):

Ծանօթություն.—Արտադրական պլանը կազմելու ժամանակ դասաւորման պետք ե ժամանակ առանձնացնի կրկնության համար:



653




8 ս ն կ

Հայոց լեզու
Թվաբանություն

ԵՇ
Տ
Ց



123091



ПРОГРАММЫ
для школ взрослых по ликвидации
неграмотности.
Газ ССР Армении, Ереван 1936 г.

ԳԱԱ Հիմնարար Գիլ. Գրադ.



FL0004467